



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕԸՆԵ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՈ ՄՈՒՏՐԵԱՆ

# ԿԱՆՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ




**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱԾԱՐ

ԿԻՐԱԿԻ, 20 Յունիս 2021

220

DIMANCHE, Le 20 Juin 2021



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Դ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱՍՏԵԱՆ  
QUATRIÈME DIMANCHE APRÈS LA PENTECÔTE.

Աստուածաշունչի Ընթերցումներ  
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՈՌԿՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ  
ԳՐԱՅ ՆԱՄԱԿԵՆ  
(7.25-8.11)

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԵՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԵՆՍԻ  
(12.38-45)

Les lectures de la Bible d'aujourd'hui :

ROMAINS

7.25-8.11

MATTHIEU

12.38-45

ՊԱՏԱՐԱԳԻՉ ԵՒ ՔԱՐՈՉԻՉ՝

ՀՈԳԵԲՈՐ ՀՈԿԻԻ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

CÉLÉBRANT: PRÊTRE PAROISSIAL

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան ժամերգութիւն ժամը- Office Matines à	9:30-ին 9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում ժամը- La Sainte Messe – En direct à	10:30-ին 10h30
Հոգեհանգիստ - ուղիղ սփռում ժամը- Office de Requieme – En direct à	12:30-ին 12h30

DIACRES – ACOLYTES

Organist: Vahram Sargsyan

Choeur Gomidas

# ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES  
DE DIMANCHE**



**THE SUNDAY  
READINGS**

## **ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՈՒՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԵՆ (7.25-8.11)**

Գոհով և Աստուծոյ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսին: Ուրեմն ես մտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ ու մարմնով՝ մեղքի օրէնքին:

Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր: Քանզի Քրիստոս Յիսուսով կեանքի հոգիին օրէնքը զիս ազատեց մեղքի եւ մահուան օրէնքէն: Վասն զի այն որ օրէնքին համար անկարելի էր, որովհետեւ տկար էր մարմնով, Աստուած իր Որդին որկերով մեղանշական մարմնի նմանութեամբ ու մեղքի համար եւ դատապարտեց մեղքը այն մարմնին մէջ. Որպէս զի օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջ, քանի որ մարմնաւորապէս չենք քալեր, հապա՝ հոգեւորապէս: Քանզի մարմնաւոր եղողները մարմնին բաները կը մտածեն ու հոգեւոր եղողները՝ հոգիին բաները: Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է իսկ հոգեւոր խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն: Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. վասն զի Աստուծոյ օրէնքին չի հնա-զանդիր, մանաւանդ չի կրնար այլ: Վասն զի մարմնով եղողները չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ: Բայց դուք մարմնով չէք, հապա՝ հոգի-ով, եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնակած է. իսկ եթէ մէկը Քրիստոսին Հոգին չունի, անկա անորը չէ: Եւ եթէ Քրիստոս ձեր մէջ է, ա՛յլ մարմի-նը մեռած է մեղքի համար ու հոգին կենդանի է արդարութեան հա-մար: Իսկ եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր մէջ բնա-կած է, ուրեմն անկա որ Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, պիտի կենդանացնէ ձեր մահկանացու մարմիններն ալ իր Հոգիովը որ ձեր մէջ կը բնակի:

## **ԱԲԵՏԱՐԱՆ ԱՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ (12.38-45)**

Այն ատեն դպիրներէն ու փարիսեցիներէն ոմանք իրեն ըսին. «Վա՛րդապետ, կ'ուզենք քեզմէ նշան մը տեսնել»: Անկա պատաս-խան տուաւ ու անոնց ըսաւ. «Չար եւ շնացող ազգը նշան կ'ուզէ: Ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը: Քանզի ինչպէս Յովնան երեք օր ու գիշեր կէտ ծուկին փորին մէջ մնաց, այնպէս Որդին մարդոյ պիտի մնայ երկրի սրտին մէջ՝ երեք օր ու երեք գիշեր:

Նիկուէի մարդիկը դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլեն ու պիտի դատապարտեն ասիկա, վասն զի Յովնանի քարոզութիւնովը զղջացին: Ահա Յովնանէն մեծ մէկը կայ հոս: Հարաւի թագուհին դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլէ ու պիտի դատապարտէ ասիկա, վասն զի ինք երկրի ծայրերէն եկաւ Սողոմոն-նին իմաստութիւնը լսելու. եւ ահա Սողոմոնէն մեծ մէկը կայ հոս»:

«Երբ պիղծ ոգին մարդէ մը ելլէ, անջուր տեղերը պտըտի՝ հանգըստութիւն փնտռէ ու չգտնէ. Այն ատեն կ'ըսէ. 'Դառնամ Նորէն իմ տունս, ուրկէ ելայ': Կու գայ զանիկա կը գտնէ պարսպ, մաքրուած ու յարդարուած: Այն ատեն կ'երթայ ու իրեն հետ կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար ու մտնելով հոն կը բնակին: Այն մարդուն վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ: Այսպէս պիտի ըլլայ այս չար ազգին այլ»:

## ROMAINS

### 7.25-8.11

Je rends grâces à Dieu par Jésus-Christ notre Seigneur. Je sers donc moi-même de l'entendement à la Loi de Dieu, mais de la chair, à la loi du péché.

Il n'y a donc maintenant aucune condamnation pour ceux qui sont en Jésus-Christ, lesquels ne marchent point selon la chair, mais selon l'Esprit. Parce que la Loi de l'Esprit de vie [qui est] en Jésus-Christ, m'a affranchi de la Loi du péché et de la mort. Parce que ce qui était impossible à la Loi, à cause qu'elle était faible en la chair, Dieu ayant envoyé son propre Fils en forme de chair de péché, et pour le péché, a condamné le péché en la chair; Afin que la justice de la Loi fût accomplie en nous, qui ne marchons point selon la chair, mais selon l'Esprit. Car ceux qui sont selon la chair, sont affectionnés aux choses de la chair; mais ceux qui sont selon l'Esprit, [sont affectionnés] aux choses de l'Esprit. Or l'affection de la chair est la mort; mais l'affection de l'Esprit est la vie et la paix. Parce que l'affection de la chair est inimitié contre Dieu; car elle ne se rend point sujette à la Loi de Dieu ; et aussi ne le peut-elle point. C'est pourquoi ceux qui sont en la chair ne peuvent point plaire à Dieu.

Or vous n'êtes point en la chair, mais dans l'Esprit; si toutefois l'Esprit de Dieu habite en vous; mais si quelqu'un n'a point l'Esprit de Christ, celui-là n'est point à lui. Et si Christ est en vous, le corps est bien mort à cause du péché; mais l'esprit est vie à cause de la justice. Or si l'Esprit de celui qui a ressuscité Jésus des morts habite en vous, celui qui a ressuscité

Christ des morts, vivifiera aussi vos corps mortels à cause de son Esprit qui habite en vous.

## **MATTHIEU**

### **12.38-45**

Alors quelques-uns des Scribes et des Pharisiens lui dirent : Maître, nous voudrions bien te voir faire quelque miracle. Mais il leur répondit, et dit : la nation méchante et adultère recherche un miracle, mais il ne lui sera point donné d'autre miracle que celui de Jonas le Prophète. Car comme Jonas fut dans le ventre de la baleine trois jours et trois nuits, ainsi le Fils de l'homme sera dans le sein de la terre trois jours et trois nuits. Les Ninivites se lèveront au [jour du] jugement contre cette nation, et la condamneront, parce qu'ils se sont repentis à la prédication de Jonas; et voici, il y a ici plus que Jonas. La Reine du Midi se lèvera au [jour du] jugement contre cette nation, et la condamnera, parce qu'elle vint du bout de la terre pour entendre la sagesse de Salomon; et voici, il y a ici plus que Salomon.

Or quand l'esprit immonde est sorti d'un homme, il va par des lieux secs, cherchant du repos, mais il n'en trouve point. Et alors il dit : je retournerai dans ma maison, d'où je suis sorti; et quand il y est venu, il la trouve vide, balayée et parée. Puis il s'en va, et prend avec soi sept autres esprits plus méchants que lui, qui y étant entrés, habitent là; et ainsi la fin de cet homme est pire que le commencement; il en arrivera de même à cette nation perverse.



Ավետարան ըստ Մատթեոսի - Գլուխ 15

# Շաբաթ, 19 Յունիս 2021 Ս. Գրիգոր Լուսաւորիչի Նշխարներու Գիւտը

Յոգեգալստեան տօնին

Երրորդ Շաբաթ օրը Յայ  
Առաքելական Սուրբ Եկեղեցին կը  
տօնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչին  
Նուիրուած տօներէն երրորդը՝  
Նշխարներու գիւտը:



Աւանդութեան համաձայն, երբ

լրացաւ Լուսաւորիչի քահանայապետութեան երեսուն տարին, Տիրոջ  
հրամանով ան Ելաւ Սեպուհ լեռան կատարը եւ առանձնացաւ լռութեան  
մէջ՝ Մանեայ անունով քարայրի մը մէջ:

Սուրբին մահէն միայն որոշ ժամանակ ետք, քանի մը հովիւներ, երբ  
պատահմամբ քարայր մտան հանգստանալու, գտան անոր մարմինը եւ  
ենթադրելով, որ պարզ ճգնաւոր է, քարակոյտի տակ ամփոփեցին անոր եւ  
հեռացան:

Տարիներ ետք, Գառնիկ անունով ճգնաւոր մը տեսիլքով կը գտնէ սուրբին  
մարմինը: Վերջինս Յայոց Յայրապետին նշխարները փոխադրեց եւ  
ամփոփեց Դարանաղեաց գաւառի Թորոզան աւանին մէջ: Յետագային այդ  
վայրին մէջ կանգնեցուցին վկայարան մը: Նշխարներուն մէկ մասը տարին  
քաղաքամայր Վաղարշապատ, մինչեւ անգամ Բիւզանդիոն եւ Իտալիա:

5-րդ դարուն 2եւտն կայսրը սուրբին մարմինը կը տեղափոխէ Պոլիս, 7-րդ  
դարուն Գրիգոր Լուսաւորիչի Աջը կը բերուի Յայաստան, որ պահպանուած  
է Ս. Էջմիածինի մէջ: Անկա Սրբալոյս Միւռնի Օրինութեան գլխաւոր  
սրբութիւններէն մէկն է եւ Յայրապետական Աթոռի իշխանութեան  
պաշտօնական նշանակը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը մեր հաւատքի Յայրն է իր հաւատքով ու  
Նուիրումով: Ու մենք իբրեւ Յայ Եկեղեցւոյ գաւակներ ո՛չ միայն կը խնդրենք  
Սուրբին բարեխօսութիւնը, այլ նաեւ՝ հաշուետու ենք Սուրբին առջեւ:

Իւրաքանչիւր Քրիստոնեայ իր կեանքի ընթացքին կը կանգնի պայթարելու  
եւ արդար պայթարին յաղթող դուրս գալու խնդրին առջեւ, որուն լաւագոյն  
օրինակը կարելի է տեսնել Ս. Գրիգոր Լուսաւորիչի կերպարին մէջ:

Օրուան խորհուրդը մեր միտքն ու ուշադրութիւնը կը հրաւիրէ յատկապէս  
Ս. Գրիգոր Լուսաւորիչի կրած չարչարանքներուն վրայ, որոնց արդիւնքով  
կառուցուեցաւ Յայոց Գողգոթան: Բոլոր տաճարները՝ կառուցուած Յայոց  
աշխարհին մէջ կարծես Ս. Գրիգոր Լուսաւորիչի կրած չարչարանքներուն  
վկայութիւնն են, որոնք դարձած են կենդանի աղօթք եւ ճշմարիտ  
խոստովանութիւն: «Եթէ մէկը ուզէ հետեւիլ ինձ, թող ուրանայ իր անձը,

վերցնէ իր խաչը եւ գայ իմ ետեւէս». Քրիստոսի այս պատգամը ո՛չ միայն հնչեց Չայոց աշխարհին մէջ, այլ նաեւ՝ կեանքի կոչուեցաւ: Ս. Գրիգոր Լուսաւորիչը վերցուց իր խաչը եւ հետեւեցաւ Քրիստոսին: Եւ ինչպէս Տիրոջ տասներկու առաքեալները եղան Քրիստոսի եկեղեցւոյ սիւները, այնպէս ալ Ս. Գրիգոր Լուսաւորիչի տասներկու սուկալի չարչարանքներով կառուցուեցաւ Չայոց Վերնատունը, ուր մշտապէս կը յայտնուի մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ իր խաղաղութիւնն ու օրհնութիւնը բաշխելով բոլորիս:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի սրբութեան ամբողջ բովանդակութիւնը սէ՛րն է,  
համբերութեան գաղտնիքը սէ՛րն է,  
յաղթանակի գրաւականը սէ՛րն է:

Saturday, June 19, 2021

### **Commemoration Day of the discovery of the Relics of St. Gregory the Illuminator**

The Commemoration Day of the discovery of the relics of St. Gregory the Illuminator is one of the three significant feast days dedicated to the memory of the Patron Saint of Armenia.

According to Holy Tradition, following Armenia's conversion to Christianity, in his final years, St. Gregory led an ascetic life in the cave of Mane on the Mountain named Sebouh where he died in 326 A.D. Shepherds, finding his body, buried him not recognizing the Armenian Pontiff. One of his students, Karnig from Basen sees a vision, where Gregory identifies the location of his relics. The relics were thereupon transferred to the village of Tordan, in the province of Daranagh, and buried there.

The relics of St. Gregory the Illuminator are one of our most revered within the Armenian Church, as well as all Christian Churches. Following their discovery, some were taken to various places for safekeeping, among them Vagharshabdt (Etchmiadzin), Byzantium, and Italy. The Right Hand of the Saint, preserved in the Mother See of Holy Etchmiadzin, is one of the most important sanctities of the Armenian Church, and is used by the Catholicos of All Armenians during the blessing of the Holy Chrism (Muron). To commemorate the day, Divine Liturgy is celebrated in our Churches.

## Սրբութեան Ընկալումը Քրիստոնէութեան Մէջ. պատմութիւն եւ ականդոյթ

Սուրբը կատարեալ Քրիստոնեային յատուկ անբասիր կեանքով, վարքով ապրած, արդարացուած ու հաւատքով փրկուած, Սուրբ Հոգիի շնորհքը ընդունած, Աստուծոյ ներգործութիւնը իր մէջ կենդանի պահած եւ անոր հետ մշտապէս հաղորդութեան մէջ եղած մարդն է եւ, առհասարակ, սրբակեաց հաւատացեալը:

Եթէ աչքի անցնենք Սուրբ Գիրքը, կը տեսնենք, որ «սուրբ» մակդիրը գործածուած է նախ եւ առաջ Աստուծոյ վերաբերմամբ, քանի որ սրբութիւնը Աստուծոյ ստորոգելիներէն է. սրբութեան աղբիւրը Աստուածն է: Վրդէն Նոր կտակարանին մէջ Աստուծոյ, ինչպէս նաեւ երկնային հրեշտակներուն վերապահուած սրբութիւնը քրիստոնեական առաջին դարերու գրականութեան մէջ Պօղոս առաքելի շնորհիւ կը տրուի նաեւ՝ երկրային արարածներուն: Քրիստոսի փրկարար տնօրինութենէն յետոյ սրբութիւնը թափանցեց մարդկային կեանք: Քրիստոսով բացուեցաւ մարդուն՝ սրբացման լուսապսակին արժանանալու ուղին:

Սուրբերու մեծարանքը արեւմտեան եկեղեցիներու մէջ պաշտօնապէս վաւերացուած է Նիկիոյ 787 թ. 2-րդ ժողովով, ինչ որ կը փաստէ, որ միայն Քրիստոս կրնայ պաշտուիլ, իսկ սուրբերը՝ միայն մեծարուիլ: Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ մէջ սուրբերու պաշտամունքը եկեղեցւոյ պատմութեան եւ ականդութեան մաս կը կազմէ: Եկեղեցական հայրերը եւ այլ Քրիստոնեական հեղինակներ առատ տեղեկութիւններ կը հաղորդեն հալածանքներու, Նահատակութիւններու եւ սուրբերու պաշտամունքի մասին:

Սուրբերու հրապարակային պաշտամունքը եւ անոնց բարեխօսութեան դիմելու կարգը կը յիշատակուի արդէն 2-րդ դարէն: Տեղական համայնքները սուրբերու նահատակութեան տարելիցներուն հաւաքուած են անոնց գերեզմաններուն շուրջ եւ աղօթած, որ վերջիններս իրենց համար բարեխօս ըլլան երկինքին մէջ: Հետագային սուրբերու շիրիմներուն վրայ, վկայութեան վայրերուն մէջ կառուցուած են վկայարաններ, մատուռներ: Հրեանոսներու կողմէ իրականացուող հալածանքներու ուժգին ալիքի անկման եւ վերացման զուգահեռ՝ սրբակեցութեան փնտրտութիւնները ծնունդ տուին Քրիստոնեական ճգնակեցութեան երեւոյթին եւ վանականութեան: Երբ ճգնաւորը կը դառնայ իսկական Քրիստոնեայի կերպար՝ իբրեւ աշխարհիկ կեանքէն հրաժարուող ու Քրիստոսին նուիրուող, ան կ'ընդունուի որպէս սուրբ, սակայն մարտիրոսներուն ոչ հաւասար: Ժամանակի ընթացքին ճգնակեցութիւնը կը փոխակերպուի վանական



դպրութեան: Վանականները կը ճանչցուին սրբակեաց, սակայն ոչ անպայման սուրբ (սրբակեաց վանականներէն ոմանք ալ անցած են տօնեյի սուրբերու շարքը՝ Գր. Նարեկացի՝ դ., Յովհան Որոտնեցի՝ դ., Գրիգոր Տաթեւացի՝ դ.):

Տարբեր եկեղեցիներուն մէջ «սուրբ» հռչակուած են նաեւ՝ այն հոգեւորականները, հայրապետները, աշխարհիկները, պետական գործիչները, որոնք իրենց գործունեութեամբ նպաստած են Քրիստոնեական հաւատքի պահպանման եւ տարածման, նաեւ՝ մեծ հետք թողած ազգային կեանքի տարբեր ասպարեզներուն մէջ: Որեւէ մարդ չկրնար «սուրբ» կոչուիլ ըստ մարդկային չափանիշներու եւ կամ ինքն իրեն սուրբ հռչակել: Սուրբը եկեղեցւոյ կողմէ սրբացուած անձն է, որուն Աստուած է որ կը սրբացնէ:

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի երկու դասի սուրբեր՝ հռչակուած կամ տօնեյի (Եկեղեցւոյ «Տօնացոյց»-ին մէջ ներառուած) եւ պաշտուող (չներառուած): Հռչակուած սուրբերը կը յիշատակուին օրուայ ժամերգութիւններուն եւ Սուրբ Պատարագի ընթացքին: Պաշտուող սուրբերը եկեղեցւոյ մէջ կը յիշուին սրբոց օրերուն՝ կ'ընթերցուին համապատասխան հատուածներ «Հայսմավուրդքէն» («Նահատակներու գիրք», «Վարք սրբոց»): Բնականաբար, կան սուրբեր, որոնք անյայտ մնացած են: Այդ պատճառով Հայաստանեայց Եկեղեցին կը տօնէ «Բոլոր սուրբերու օրը», որուն ընթացքին կը յիշատակուին «ծեր եւ երիտասարդ, յայտնի եւ անյայտ» սուրբերը: Սուրբերու յիշատակին նուիրուած օրերն ու պահքերը կը սահմանուին համապատասխան եկեղեցւոյ «Տօնացոյց»-ին:

Մեզմով տօնուող սուրբերը ժամանակային առումով վերցուած են Հին և Նոր կտակարաններէն եւ քրիստոնեութեան, առաւելապէս, վաղ շրջանի (մինչեւ V դար) եկեղեցւոյ պատմութենէն: Իսկ Քաղկեդոնի ժողովէն (451 թ.) եւ Ընդհանրական Եկեղեցւոյ բաժանումէն յետոյ սրբադասուածները գերակշիռ կերպով Հայ Եկեղեցւոյ հետեւորդներ են:

Աստուած մարդուն բարձրացնելու համար տուաւ Իր Որդին, ուղղորդեց մարդոց դէպի փրկութիւն, եւ, որպէս մշտապէս շօշափելի ներկայութիւն, ցոյց տուաւ սուրբերուն, Քրիստոսի ճամբով քալող մարդոց՝ իբրեւ օրինակներ՝ գիտակցելու, որ սրբութիւնը անհասանելի բան չէ: Այն հասանելի, իրական յատկութիւն է անգամ այսօրուայ մարդուն համար, եւ որ միայն ցանկութիւն եւ աշխատանք կը պահանջէ: Արդարեւ, այն եկեղեցին, որ դադրած է սուրբեր ծնեցնելէ՝ դադրած է նաեւ՝ կենսունակ եկեղեցի ըլլալէ:

# ՆՈՒԲՐԱՏՈՒԹԻՒՆ ԵՎԵՂԵՅԻՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

**Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար  
Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC  
Donations of June 2021 have been received with great appreciation**

**CHURCH:**

**FATHERS DAY:**

Mrs. Seta Artokun \$50  
Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$50

**HOKEHANKISD (Requiem Services)**

**IN MEMORY OF:**

**THE LATE KAPRIYEL BASMAJIAN:**

Mrs. Irma Basmajian \$200

**THE LATE KEOPRULIAN FAMILY:**

Mrs. Anoush Keopruslian \$50  
Mr. & Mrs. Avedis Djihanian \$25

**THE LATE MARINA APKARIAN:**

Mr. Arto Demir \$60

**THE LATE ARMEN TER-STEPANYAN:**

Mr. Gevorg Tadevosyan \$100  
Mr. Tigran Ter-Stepanyan \$50

**THE LATE HAKIMIAN & BERBERIAN FAMILIES:**

Mrs. Houri Hakimian & Family \$250





**Ա. ԽՈՐԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐ**

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին Ա. Խորանին ծաղիկներ  
նուիրել կրնան հեռաձայնել եկեղեցւոյս գրասենեակ (514) 279-3066:

**ALTAR FLOWERS:**

Parishioners who wish to donate flowers for the Holy Altar are asked to call  
the Church office (514) 279-3066.

Առցանց նուիրատուութիւններու համար  
հաճեցէք սեղմել ներքոնշեալ կապը.-

For online donations please click the link below:

**[saintgregory.ca](http://saintgregory.ca)**



Շնորհակալութիւն ձեր նուիրատուութեան համար:

Merci pour votre don!

Thanks for your donation

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒՄԱՆ  
Յունիս – June**

21, Երկուշաբթի – Սրբոց վկայիցն Անտոնինոսի,  
Թէոփիլոսի, Անիքստոսի եւ Փոտիւնոսի:

Lundi 21 – Jeûne. Fête des Saint martyres Antonios,  
Théophile, Aicet et Photius.

22, Երեքշաբթի – Սրբոցն Դանիէլի մարգարէին եւ երից մանկանցն՝ Սեդրակայ,  
Սիսաբայ եւ Աբեղնագովի:

Mardi 22– Jeûne. Fête du Prophète Daniel et des trois enfants:  
Sétrag, Misak et Apètnakov.

23 Չորեքշաբթի – Պահք  
Mercredi 23– Jeûne

24, Զինգշաբթի – Սրբոց թարգմանչաց հարցն մերոց  
Սահակայ եւ Մեսրոպբայ:

Jeudi 24 – Jeûne. Fête de nos Saints Traducteurs,  
St. Sahag et St. Mesrob.

25, Ուրբաթ – Պահք  
Vendredi 25 – Jeûne

26, Շաբաթ– Սրբոցն Տրդատայ թագաւորին մերոյ,  
Աշխէնի տիկնոցն եւ Խոսրովիդիստոյն:

Samedi 26 - Fête de notre roi Dertad, de la regne Achkhène  
et de Khosrovatoukhd.



ՅՈՒՂԱՐԿԱԼՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ  
ԵՒ ԹԱՂՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ԿԱՐԳԱԴՈՐՈՒՄ  
THE ARRANGEMENTS OF THE BURIAL  
& FUNERAL SERVICES



Մեր սիրելի հաւատացեալներուն կը փափաքինք  
տեղեակ պահել թէ՝  
յուղարկաւորութեան կարգի ծրագրաւորման եւ թաղման  
ծառայութիւններու կարգաւորման համար համեստօրէն կը  
խնդրուի

**առաջին հերթին հեռաձայնել** Եկեղեցւոյ գրասենեակ, ուր  
հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան  
իրավիճակին համաձայն պիտի կիրարկուին անրաժեշտ  
միջոցները եւ Եկեղեցւոյ միջոցաւ ձեռք պիտի առնուին եւ  
ուղղորդուին թաղման համապատասխան ծառայութեան:

Դիմեցէք մեզի հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝  
(514) 279-3066



We would like to inform our faithful that:  
to set up a burial and funeral service ,  
it is highly requested **before any other arrangements** to call the  
Church office, where the necessary arrangements will be made  
according to the convenience of the family members of the  
deceased, planning the church and the procedure of the funeral  
services.

Contact us at (514) 279-3066

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

## ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

<<Մարդիկ, որոնք ամբողջովին յանձնուած են կեանքի հոգեբուն՝ կը նմանին (չափէն աւելի) կերակրուած թռչուններու, որոնք անկիմաստ կը կրեն թռելը եւ երկրի վրայ մնացած անասուններուն հետ կը քաշքշուին>>:

Սուրբ Բարսեղ մեծ

Վեճերով եւ արդարացումներով կլանուած միտքը չի կրնար քննալ, խոնարհ միտքը երբեք չի յոգնիր եւ վեճերու ու արդարացումներու կարիք չունենար:

Սիմէոն Աթոսացի

Ով կը նեղացնէ, մի գայրանար: Եթէ անունը գիտես, աղօթէ: Աղօթքը ամենամեծ ուժն է, որ կը փոխէ մարդուն բախտը: Այս աշխարհին վրայ չկայ զօրութիւն, որ առաւել կ'ազդէ մարդու կեանքին վրայ, քան աղօթքը:

Հայր Նիքոլայ Գուրեանով

**ԵՐԵՔՇԱԲԹԻ, 22 ՅՈՒՆԻՍ 2021  
ՏՕՆ ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԵԻ ԵՒ ԵՐԵՔ ՄԱՆՈՒԿՆԵՐ՝  
ՍԵՂՐԱԿ, ՄԻՍԱՔ ԵՒ ՅԱԲԵԹՆԱԳՈՎ  
ՏՕՆԵԼԻ ԱՆՈՒՆՆԵՐ  
ԴԱՆԻԷԼ, ՄԻՍԱՔ, ՍԵՂՐԱԿ- ՅԱԲԵԹ:**

**TUESDAY, JUNE 22, 2021  
ST. DANIEL, THE PROPHET AND COMPANIONS STS.  
SHARACH, MESIAH & ABEDNEGO  
CELEBRATED NAMES  
DANIEL, MISAK, SETRAG, HAPET.**

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ  
ԿԻՐԱԿԻ, 20 Յունիս 2021**



**Չօլաբեան եւ Մուրատեան ընտանիքներ,  
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն  
իրենց սիրեցեալ հարազատին՝  
ՎԵՐԳԻՆ ՎԵՐԾԻՆԻԱ  
ԼԵՅԼԵՔԵԱՆԻ  
(VERKIN VERGINIA LEYLEKIAN)  
մահուան 40-ին առիթով:**



**Տիկ. Հուրի Հաքիմեան եւ ընտանիքը,  
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն  
իրենց սիրեցեալ ամուսնոյն եւ հօր՝  
ՌԱԶՄԻԿ ՀԱՔԻՄԵԱՆԻ  
(RAZMIG HAKIMIAN)  
մահուան 19-րդ տարելիցին առիթով  
Ինչպէս նաեւ  
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝  
ԿԱՐԴԻՍ ԵՒ ԱՐԱՔՍԻ  
ՀԱՔԻՄԵԱՆՆԵՐՈՒ  
(GARBIS & ARAXIE HAKIMIAN)  
ԵՒ  
ԳՐԻԳՈՐ ԵՒ ԱԼԻՍ  
ՊԵՐՊԵՐԵԱՆՆԵՐՈՒ  
(KRIKOR & ALICE BERBERIAN)  
հոգիներուն ի հանգիստ:**



**Տ. եւ Տիկ. Պետո եւ Քնար Մելիք,  
Տ. եւ Տիկ. Ռուտովֆ եւ Նուշիկ Մելիք,  
Տ. եւ Տիկ. Լուսովիկ եւ Թալին Մելիք,**

հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ քոջ եւ  
հօրաքոջ՝

**ՄԱՆՈՒՇ ԴԵԿԼԱՐԵԱՆԻ**  
**(MANOUSH BEGLARIAN)**

(մահացած Իսպահան)  
մահուան 40-ին առիթով:



### **ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՂՈԹՔ**

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,  
գթա քո արարչական սիրովդ

ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:

Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:

Արա արժանի ողորմութեան քաւութեան  
եւ թողութեան մեղաց:

Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո  
յաջակողմեան դասուն:

Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.

դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:

Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:



# Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱԴՐՈՒԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ՍԻՐԱԼԻՐ ԶՐԱԷՐ ԲՈԼՈՒՐՆ  
CORDIAL INVITATION TO ALL



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Հանդիպվ կը յայտնենք մեր հաւատացեալներուն թէ  
շարունակաբար Եկեղեցին բաց է շաբթուան ընթացքին  
Երկուշաբթիէն – Ուրբաթ  
10:30-էն մինչեւ կ.ե. ժամը 4:30  
Շաբաթ – 11:00 – 3:00  
Կիրակի- 9:30 – 2:00

Անոնք որոնք իրենց ուխտի կատարման համար կը փափաքին  
այցելել Եկեղեցի, աղօթելու եւ մոմավառութեան համար, կրնան  
շարունակել իրենց աստուածահանոյ առաքելութիւնը:  
Եկեղեցոյ դռները բաց են մեր բոլոր հաւատացեալներուն համար:

We are pleased to inform our faithful that during weekdays the  
Church is open from:

Saturday - Friday

At 10:30 AM to 4:30 PM

Saturday – 11:00 AM – 3:00 PM

Sunday – 9:30 AM – 2:00 PM

Those who wish to visit the Church to fulfill their covenant,  
pray, and light candles can continue their mission.





Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ  
ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՂՈԹՔ



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Չորեքշաբթի, 23 Յունիս 2021

Երեկոյեան ժամը 5:00-ին:

Արժ. Տ. Դաւիթ Քիւյ. Մարգարեանի հետ:

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից  
ըլլալու երեկոյեան ժամերգութեան առցանց եկեղեցոյ դիմատետրի եջով:

«Եւ այսպէս ըրէք, գիտնալով թէ ժամանակն է, որ թունեն արթնանաք.  
վասն զի հիմա մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ  
հաւատացինք» (Ռոմ. 13:11):

Աղօթաբոյր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ հաւատացեալներուն:

**SERVICE DU SOIR ET PRIÈRE DE GUÉRISON**

avec le R.P. David Margaryan

Mercredi, le 23 Juin 2021 à 17h00.

**Nous invitons nos chers fidèles à participer  
à service du soir via la page Facebook de l'Église.**

“Cela importe d'autant plus que vous savez en quel temps nous  
sommes: c'est l'heure de vous réveiller enfin du sommeil, car  
maintenant le salut est plus près de nous que lorsque nous avons cru”  
(Romans 13 :11).

**Nous souhaitons des moments de prière à nos fidèles.**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Մայր Տաճար  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՀՈԳԵԻՈՐ ԶՐՈՅՑ  
CONVERSATION SPIRITUELLE



**Չորեքշաբթի, 23 Յունիս 2021**

Երեկոյեան ժամը 6:30-ին

Արժ. Տ. Դավիթ Զինյ. Մարգարեանի հետ:

Մեր սիրելի հաւատացեալները կրնան մասնակցիլ  
Zoom ծրագիրի միջոցաւ:

Zoom ծրագիրի մասնակցութեան կապը ստանալու համար  
հաճեցէք հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

**Mercredi, Le 23 Juin 2021 à 18h30**

avec le R.P. David Margaryan

Nous invitons nos chers fidèles peuvent participer  
à travers le programme Zoom.

Pour obtenir le lien pour participer au programme Zoom  
Veuillez appeler le bureau de l'Église au (514)279-3066.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



## ԱՄԵՆԱՄՍԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

**f Աղցանց – En direct/Live**

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



### Շաբաթ, 26 Յունիս 2021

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**« Իսկ դուն երբ աղօթք կ'ընես, մտիր քու ներքին սենեակդ ու դռանդ գոցել աղօթքը ըրէ քու Զօրդ որ գաղտուկ տեղ կը գտնուի եւ քու Զայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ: »  
(Մտթ. 6:6):**

### Samedi, le 26 Juin 2021

Office du soir à 17h00.

**“Mais quand tu pries, entre dans ta chambre, ferme ta porte, et prie ton Père qui est là dans le lieu secret; et ton Père, qui voit dans le secret, te le rendra.”  
(Matthieu 6 :6).**



ՀԱՅՑ. ԱՊԱԶ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՌՈՐԻՉ  
ԱՊՈՍՏՈՐԴԱՆԻԱՏ ԱՅՅՐ ՏԱՃԱՐ Ի ՄՈՆՏՐԵԱԼ  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL  
OF MONTREAL



ԱՄԱՌՆԱՅԻՆ ՓՈՔՐ ՎԱՃԱՌԸ  
ԽՍՐՈՒՂԵՆԻ ԵՒ ԱՆՈՒՇԵՂԵՆԻ ՎԱՃԱՌԸ  
ՇԱՐԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ՝ 3 ԵՒ 4 ՅՈՒԼԻՍ 2021

Կազմակերպութեամբ՝  
Տիկնանց Յանձնախումբին Եւ Օժանդակներուն  
Առաւօտեան ժամը 10:00 -Էն մինչեւ Կ.Ե. 3:00  
Եկեղեցոյ պարտեզին մէջ:

Անհրաժեշտ է սքահաբանել առողջապահական  
ուղղեցոյցները.-  
2 մէթր ֆիզիքական հեռաւորութիւն եւ դիմակի  
գործածութիւն:

**SUMMER MINI-BAZAAR  
PASTRY SALES**



**SATURDAY & SUNDAY  
JULY 3 & 4, 2021**

**Organized by Ladies Auxiliary**

**From 10:00 AM to 3:00 PM - In the Church garden.**

**It is necessary to keep the guidelines of a pandemic:  
keeping 2- meter physical distancing & the use of a mask.**



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Web site : [www.stgregory.ca](http://www.stgregory.ca) / E-mail : [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՄՈՆՏՐԵԱԼԻ Ս. ԳՐԵԳՐԻ ԼՈՒԿԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԱՆԻՍ ՍԱՅՐ ՏԱՃԱՐ  
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

### ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէյպէք նահանգի իշխանութեան, առողջապահական կառոյցներու յայտարարութեան եւ Գանատահայոց Թեմի հրահանգներուն՝ կանխարգիլելու համար թագաժահիրի Covid-19 տարածման վտանգը, **ներկայիս Քէյպէք նահանգը անցնելով Դեղին գօտիի, որուն համաձայն կը կիրարկուի հետեւեալ համակարգը .-**

- Մկրտութիւններու, պսակադրութիւններու եւ յուղարկաւորութիւններու պարագային **արտօնուած է առաւելագոյնը 50 հոգիի ներկայութիւն**, դիմակներու գործածութիւնը անհրաժեշտ է ամբողջ արարողութեան տեւողութեան ընթացքին, պահելով իրարմէ 2 մետր հեռաւորութիւն:
- Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Ս. Պատարագներուն, ժամերգութիւններուն եւ մնացեալ արարողութիւններուն **առաւելագոյնը 250 հոգիի ներկայութիւն:**
- Կարելի է հետեւիլ նաեւ՝ առցանց եկեղեցւոյ դիմատեսքի էջով –Facebook Live

#### **f Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

Մնացեալ հարցերու համար կրնաք դիմել Զոգեւոր Զովիկին, հեռ.

(514) 448-2809:

Զեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններուն եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### IMPORTANT NOTICE

We would like to inform our parishioners that following the Quebec State Authority, a statement from health care providers, and instructions from the Armenian Diocese of Canada to prevent the spread of Covid-19,

**Quebec currently is in the yellow zone, as of according to new guidelines will be as follows:**

- **Up to 50 people are allowed** in the case of baptisms, marriages & funerals, the use of masks is required throughout the ceremony, keeping 2 m distance from each other.
- Church Sunday Liturgies, prayer services, and other ceremonies the attendance **is allowed a maximum of 250 people.**

Sunday, Divine Liturgies – On Facebook Live

#### **f Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

For other questions, you can contact the Parish Priest tel. (514) 448-2809.

We wish you good health and all the best and hope to keep you informed in writing of any changes or other details.

CHURCH OFFICE



ՄՈՆՏՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԿԱՆՈՍ  
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ  
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

## Note Importante

Nous vous informons chers croyants que conformément aux directives du gouvernement du Québec, après la déclaration des autorités de santé publique et des instructions du diocèse de l'Église apostolique arménienne au Canada, pour empêcher la propagation du virus de Covid-19, **le Québec est présentement dans la zone jaune, en date du selon l'Église selon les nouveaux directeurs actuels sera la suivante :**

- **Jusqu'à 50 personnes sont autorisées** en cas de baptême, mariages et funérailles, l'utilisation de masques est obligatoire tout au long de la cérémonie, en gardant une distance de 2 m les uns des autres.
- Liturgies du dimanche de l'Église, services de prière et autres cérémonies, la participation maximale **est autorisée une capacité maximale de 250 personnes.**

Les St liturgies de dimanche, services et d'autres cérémonies de l'église peuvent être suivis en ligne sur la page Facebook de l'Église.

- 📌 **Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**  
**Pour toutes autres questions, vous pouvez**  
**contacter le prêtre au tel: (514) 448-2809**

Nous vous souhaitons surtout de bonne santé et le meilleur et espérons vous tenir informé par écrit de tout changement ou d'autres détails.

BUREAU DE L'ÉGLISE





ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ  
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GREGOIRE L'ILLUMINEUR  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

**ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ**

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



**PARKING**

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

**Address** : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2